

ՄԱՏԹԵՈՍ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ ՔԱՐՈԶԸ՝ «ԵՍ ԵՄ ՔԱՅ ՀՈՎԻԷԸ»¹ ԽՕՍՔԻՆ ՄԱՍԻՆ

Գերազանց բարիին յատկութիւնները երեք են:

Նախ, բնութեան համաձայն, ըստ ինքեան պատուական է:

Երկրորդ, բոլորին համար փափաքելի է:

Երրորդ, որ չեմ յագենար իրմէ. Ինչպէս, օրինակ, լոյսը տեսնելէն, որովհետեւ այս երեք յատկութիւնները կատարելապէս ունի. այլեւ կերակուրներէն քաղցրագոյնները, ինչպէս մեղրը, շաքարը, եւ այլն:

Նոյնպէս վատթարագոյնին համար, ասոնց նման հակառակը գոյութիւն ունի:

Նախ, որ անպիտան էութիւն է:

Երկրորդ, որ բոլոր ողջերուն կողմէ փափաքելի չէ:

Երրորդ, որ ո՛չ ոք կը ցանկայ ասով յագենալ. ինչպէս օրինակ խաւարէն, որ այս յատկութիւնները ունի. այլեւ դառնագոյն կերակուրները ունին, ինչպէս լեղին, սապոնը², օշինդրը եւ այլն:

Իսկ միջակներուն՝ միջակ երեք յատկութիւններ կան:

Նախ, որ ոմանց համար պատուական է եւ ոմանց համար՝ ոչ:

Երկրորդ, որ մէկը կը փափաքի գործել, միւսը՝ ոչ:

Երրորդ, որ մէկը միշտ յագեցած է, իսկ միւսը՝ ոչ. Ինչպէս, օրինակ, մարմնական կերակուրները, քանի որ հացն ու ջուրը մարմնական են եւ պատուական, իսկ հոգիին համար՝ ոչ. մարմինը կը փափաքի, իսկ հոգին՝ ոչ. մարմինը չի յագենար, իսկ հոգին միշտ յագեցած է:

Այսպէս ալ մարդուն մէջ ասոնք երեք կերպով կան. նախ՝ կայ գերազանց բարի մարդ, որ երեք յատկութիւններ ունի՝ իմաստութիւն, հաւատք եւ առաքինութիւններ: Նոյնպէս եւ վատթարներ կան, որոնք եւս երեք յատկութիւններ ունին, այսինքն՝ մեղք, անգիտութիւն եւ անհաւատութիւն: Նմանապէս միջակներ կան, որոնք եւս երեք յատկութիւններ ունին: Նախ, որ առանց մեղք ո՛չ ոք կրնայ ըլլալ եւ առանց արդարութեան մարդ գոյութիւն չունի, եւ մարդոցմէ մասամբ գիտուն ու տգէտ կան: Բայց առա-

¹ Յովհ. Ժ. 11, 14:

² Սապոն = հալուէ (մաքրագեղ):

քեալը կ'ըսէ. «Լաւ շնորհներուն նախանձախնդիր եղիք»³, այսինքն՝ գերազանց բարին ընտրել եւ անոր հետ երթալ, իսկ միւս բաներէն հրաժարիլ, ինչպէս, օրինակ, մեր սուրբ հայրերը գործեցին: Այդ պատճառով այսօր հաւաքուած ենք տօնախմբելով պատուելու անոնց յիշատակի օրը, յանձինս որոնց Տէրը կը հրամայէ. «Ես եմ քաջ Հովիւր»⁴:

Դարձեալ, գիտելի է, թէ երբ մարմնաւոր թագաւոր մը ոեւէ մարդու մը սիրէ, անոր բազմաթիւ բաներ կը պարգեւէ:

Նախ՝ զինք ինչ որ իշխանութեան վրայ կը դնէ, ինչպէս մեր առջեւ եղողը, որ նայիպ⁵ կը կոչենք, եւ կամ քաղաքներու վրայ, եւ կամ դռնապան, եւ կամ հեծեալ, եւ նման բաներ. այդպէս ալ մեր Տէրը, որ սիրեց առաքեալներն ու հայրապետները, անոնց իշխանութիւն տուաւ պիղծ դելերը հանելու եւ հիւանդութիւնները բժշկելու. իսկ հանդերձեալին՝ մեր մէջէն դատաւորներ եւս պիտի կարգէ:

Երկրորդ՝ որովհետեւ թագաւորները, որոնց որ կը սիրեն, իրենց ունեցուածքները անոնց կը վստահին, եւ ինչ որ անոնք ընեն, թագաւորը իրը կը համարէ: Այդպէս ալ մեր Տէրը առաքեալներուն շնորհքներ տուաւ եւ անոնց միջոցով՝ հայրապետներուն, ըստ այնմ. «Ինչ որ մէկ անգամ կապիք, եւ ինչ որ արձակէք»⁶. Եւ ահաւասիկ յայտնի է, թէ անոնք՝ որոնց որ կապեն, Քրիստոս չարձակեր, իսկ որուն որ արձակեն, չի՛ կապեր:

Երրորդ՝ անոնց խօսքերը ամբողջութեամբ կը լսէ, նոյնիսկ եթէ անոնց աղաչանքը չարերու համար ալ ըլլայ, մարմնաւոր թագաւորները կը լսեն. այդպէս ալ մեր Տէրը սուրբ հայրապետներուն աղաչանքները միշտ կը լսէ, ինչպէս ըսաւ. «Ամէն ինչ, որ հաւատով Որդիին անունով խնդրէք, պիտի տրուի ձեզի»⁷:

Չորրորդ՝ որովհետեւ արքային սիրելիները իրեն խորհրդակից կ'ըլլան. այդպէս ալ սուրբ առաքեալներն ու հայրապետները մեր Տիրոջ, ըստ այնմ. «Ձեզի տրուած է Արքայութեան խորհուրդները գիտնալ, իսկ անոնց չէ՛ տրուած»⁸, եւ թէ՛ «Աստուծոյ խորհուրդներուն տնտեսներն ենք»⁹:

³ Ա. Կորնթ. ԺԲ. 31:

⁴ Յովհ. Ժ. 11, 14:

⁵ Արաբերէն, փոխարքայ, կուսակալ, փոխանորդ (ծանօթագրութիւնը Խաղ. քհնյ. Ղազարեանին է):

⁶ Հմմտ. Մատթ. ԺԶ. 19, ԺԸ. 18:

⁷ Հմմտ. Մատթ. ԻԱ. 22:

⁸ Մարկ. Դ. 11:

⁹ Ա. Կորնթ. Դ. 1:

Հինգերորդ՝ որովհետեւ արքային սիրելիներուն հետ սիրելիները մեծարուած կ'ըլլան, իսկ թշնամիներուն հետ՝ թշնամի: Այդպէս ալ սուրբ առաքեալներն ու հայրապետները Քրիստոսի սիրելիներուն հետ, որոնք են՝ հաւատացեալները, սիրելի ու բարեկամներ են, իսկ անհաւատներուն եւ չզղջացողներուն հետ՝ թշնամիներ, ինչպէս Պետրոսը Սիմոն Կախարդին կ'ըսէր. «Քու առձաղդ քեզի հետ թող կոտորի»¹⁰: Նմանապէս Սուրբ Պասիլիոսը¹¹ միշտ հերձուածողներուն դէմ կը պատերազմէր, այլեւ Յուլիանոսին եւ ուրիշներու դէմ:

Վեցերորդ՝ քանի որ թագաւորը իր սիրելիներուն միշտ նուէրներ կը պարգեւէ: Այդպէս ալ մեր Տէրը սուրբ հրեշտակներուն միջոցով միշտ լուսափայլութիւն կը բաշխէ առաքեալներուն, իսկ անոնք՝ հայրապետներուն, իսկ անոնց միջոցով՝ բոլոր հաւատացեալներուն:

Եօթներորդ՝ որովհետեւ ուր որ արքան կը նստի, իր սիրելիները այնտեղ կ'ըլլան: Այդպէս ալ մեր Տէրը առաքեալներուն եւ սուրբերուն դասերը Հօր աջ կողմը պիտի նստեցնէ, ըստ այնմ. «Հօր սեղանին պիտի նստեցնեմ ու անցնելով պիտի ծառայեմ»¹²:

Ութերորդ՝ քանի որ անոնք, որոնք կը կամենան թագաւորը տեսնել, նախ արքային սիրելիները կը տեսնեն եւ ապա թագաւորը, որովհետեւ առանց անոնց հնարաւոր չէ թագաւորը տեսնել: Այդպէս ալ Երկնաւոր Թագաւորին ո՛չ ոք կրնայ տեսնել, եթէ նախ գալով չլսէ սուրբ հայրապետներուն ճշմարիտ վարքը եւ շարժարակից չըլլայ անոնց՝ տօնախմբութեան ժամանակ, եւ ապա անոնց աղաչանքներուն շնորհիւ զԱստուած տեսնել [կարենայ]:

Իններորդ՝ քանի որ թէեւ արքային սիրելիները բազմաթիւ են, սակայն ոմանք բոլորէն աւելի առաջ են [սիրելի են]: Այդպէս ալ, թէեւ բոլոր առաքեալները Տիրոջ աշակերտ ու սիրելի են, սակայն այս մեծամեծները, որոնց յիշատակի տօնը կը կատարենք այսօր, Քրիստոսի ծննդեան եօթը գլխաւոր վկաներն են¹³ եւ աւելի համարձակութիւն ունին Տիրոջ հանդէպ: Նմանապէս Սուրբ Գրիգորը եւ ուրիշներ:

¹⁰ Գործք. Ը. 20:

¹¹ Անկիւրայի Պասիլիոս Երէցը, Յուլիանոս Ուրացող Կայսրի (361–363) հալածանքներուն ժամանակ ձերբակալուեցաւ ու Կայսրին առջեւ տարուեցաւ, ուր քաջաբար պաշտպանեց քրիստոնէական հաւատքը, այդ պատճառով ալ անտանելի շարժարանքներու ենթարկուելով՝ իր հոգին աւանդեց: Տէն Համաքրիստոնէական Սուրբեր, Շնորհք արքեպս. Գալուստան, Գանձասար, 1997, էջ 101 (ծանօթագրութիւնը խաղ քննչ. Ղազարեանինն է):

¹² Հմմտ. Ղուկ. ԺԲ. 37:

¹³ Մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի Ծննդեան եւ Աստուածայայտնութեան տօնէն առաջ եօթ սուրբ վկաներու տօները կը տօնենք: Ատոնք են՝ «Սրբոց Դարի մարգարէին եւ Յակովբայ

Տասներորդ՝ որովհետեւ արքային սիրելիները նույնիսկ մեռնիլ յանձն կ'առնեն անոր համար, քանի որ արքային շատ կը սիրեն: Այդպէս ալ Տիրոջ աշակերտները Քրիստոսի համար յանձն առին մեռնիլ, քանի որ սիրեցին զինք, ինչպէս նաեւ հայրապետները, ինչպէս Պօղոս կ'ըսէ. «Ո՞վ մեզ Քրիստոսի սէրէն պիտի բաժնէ. նեղութիւններ, անձկութիւններ, թէ՞ ուրիշ բաներ»¹⁴: Այդ պատճառով ի դէմս անոնց Տէրը կ'ըսէ. «Ես եմ քաջ Հովիւր»:

Արդ՝ իւրաքանչիւր հոգեւոր հովիւ պարտաւոր է Քրիստոս Հովիւին նմանիլ, ինչպէս մեր սուրբ հայրերը ըրին, որ բազմաթիւ կերպերով ցոյց պիտի տամ:

Նախ՝ հովիւը հօտին առջեւէն կ'երթայ: Այդպէս ալ հոգեւոր հովիւը բարի վարքով պարտաւոր է հօտին առջեւէն երթալ, ըստ այնմ. «Ձեր բարի գործերը տեսնեն եւ Հայրը փառաւորեն»¹⁵, ինչպէս որ մեր սուրբ հայրերը այսպէս ըրին, ինչպէս յայտնի է Սուրբ Գիրքէն:

Երկրորդ՝ հիւանդ մէկը չի կրնար հօտը առաջնորդել կամ արածել, այլ՝ առողջները: Այդպէս ալ, ով որ մեղքերով հիւանդացած է՝ առաջնորդութեան կարգին արժանի չէ, որպէսզի հաւատքը չի հիւանդացնէ, ինչպէս Արիոսը¹⁶, Նեստորը¹⁷ եւ ուրիշներ ըրին: Իսկ մեր Սուրբ հայրը՝ Գրիգորը եւ ուրիշներ, որոնք աստուածային Հոգիով մաքրուեցան, եւ նոյնը պահեցին մինչեւ վերջ:

Երրորդ՝ հովիւը միշտ ոտքի է եւ չի նստիր: Այդպէս ալ եկեղեցւոյ առաջնորդները պէտք է միշտ պարապին ոտքի մնալ եւ ո՛չ թէ նստիլ՝

Տեառնեղբայր առաքելոյն», «Մրբոյն Ստեփանոսի նախավկային եւ առաջին մարտիրոսին», «Մրբոց առաքելոցն Պետրոսի եւ Պօղոսի», «Մրբոց Որդոցն Որոտման՝ Յակովբայ առաքելոյն եւ Յովհաննու աւետարանչին» (ծանօթագրութիւնը իսադ քհնյ. Ղազարեանինն է):

¹⁴ Հռոմ. Ը. 35:

¹⁵ Մատթ. Ե. 16:

¹⁶ Արիոս — Աղեքսանդրիոյ քահանայ: Արիոսական աղանդաւորական ուսմունքին հիմնադիրը: Արիոսը Ուղղափառ Եկեղեցւոյ վարդապետութիւնը՝ Հայր Աստուծոյ եւ Որդի Աստուծոյ համագոյութիւնը չէր ընդուներ: 325-ին Նիկիոյ, ապա 381-ին Կոստանդնուպոլսոյ Տիեզերական ժողովներուն մէջ արիոսականութիւնը հերետիկոսութիւն համարուեցաւ, իսկ Արիոսը նզովուեցաւ (ծանօթագրութիւնը իսադ քհնյ. Ղազարեանինն է):

¹⁷ Նեստոր (ազգութեամբ ասորի. ծննդեան եւ մահուան թուականները անյայտ են), Կոստանդնուպոլսոյ Պատրիարք 428—431: Նեստորական աղանդի հիմնադիրը, ըստ որուն՝ Սուրբ Կոյն Մարիամը Յիսուս Քրիստոսին մահկանացու ծնած է, որ Սուրբ Հոգիին միջոցով աստիճանաբար մարդկային թերութիւնները յաղթահարելով՝ աստուածային՝ «Աստուծոյ Որդի», «Մեսիա» աստիճանին բարձրացած է: Եփեսոսի մէջ գումարուած Տիեզերական երրորդ ժողովի ընթացքին (431-ին), Նեստորը նզովուեցաւ, իսկ նեստորականութիւնը հերետիկոսութիւն յայտարարուեցաւ (ծանօթագրութիւնը իսադ քհնյ. Ղազարեանինն է):

ուտել-խմելու, որովհետեւ ատիկա աշխարհական գործ է, այլ՝ անդադար աղօթել, ինչպէս այս սուրբը: Աղօթքներու մէջ Պասիլիոսին եւ ուրիշներու համար լոյսի սին կ'ըսէին:

Զորրորդ՝ հովիւը իր ձեռքին գաւազան մը ունի, որով ոչխարները կը հաւաքէ ու կը կառավարէ: Այդպէս ալ առաջնորդները պարտաւոր են իրենց ձեռքին մէջ ունենալ խրատական, յանդիմանական եւ մխիթարական խօսքերը, որով մեղսասէրները դարձի բերեն շարութիւններէն, իսկ բարիները արդարութեան մէջ պահեն [ամրացնեն], ինչպէս այս սուրբերը, քանի որ աքսորուեցան ու հալածանքներ կրեցին՝ չարերը յանդիմանելուն պատճառով:

Հինգերորդ՝ հովիւը առանց շունի ոչխարներուն մօտ չերթար, որովհետեւ թէեւ շունը գզող է, սակայն հօտին պահապան է: Այդպէս ալ առաջնորդները պարտաւոր են առանց մարմնաւոր իշխանութեան չվարուին, այլեւ ո՛չ ամենեւին առանց բարկութեան մնալ, որովհետեւ մարմնասէրները այսպիսիներէն կը վախնան ու կը փախչին: Ինչ որ Սուրբ Կիւրեղն¹⁸ ու Գրիգորը ըրին, քանի որ առանց Տրդատին՝ Սուրբ Գրիգորը հայերէն նոյնիսկ մէկ կին չկրցաւ հաւատքի բերել:

Վեցերորդ՝ միշտ այս ու այն կողմ կը պտըտի, որպէսզի յանկարծ գայլ մը գաղտագողի գալով որեւէ մէկը չպատառէ: Այդպէս ալ հոգեւոր առաջնորդները պարտաւոր են միշտ իրենց վիճակները երթալ, տեսնել, որպէսզի յանկարծ հերձուած մը բուսած ըլլալով՝ շատերը կորուստի չմատնէ, ինչպէս որ այս սուրբը, որ միշտ եւ անդադար բոլոր տեղերը կը շրջէր՝ հերձուածողները արմատէն խլելով:

Եօթներորդ՝ միշտ բերանով կը սուլէ, որով ոչխարները առանց վախի արօտին մէջ կ'արածին: Այդպէս ալ հոգեւոր հովիւները պարտին միշտ տուններուն վրայ քարոզել, ինչպէս Տէրը կ'ըսէ, որով կը սորվին անոնց հոգիները կերակրել, ինչպէս այս սուրբը, որովհետեւ իր ողջութեան ժամանակ կը խրատէր ու կ'ուսուցանէր, ինչպէս նաեւ իր մահանալէն ետք Աստուծոյ եկեղեցիին բազմաթիւ իմաստներով հոգեւոր յիշատակներ ձգեց:

Ութերորդ՝ հովիւը կը ճանշնայ բոլոր ոչխարները եւ անոնց ծնունդները, անոնց մէջ յղի եղողները եւ միւսները: Այդպէս ալ հոգեւոր հովի-

¹⁸ Խօսքը թերեւս Կիւրեղ Աղէքսանդրացիի մասին է, որ Թէոդոս Կայսրին օրով՝ 431-ին, ժողով գումարեց, որու ընթացքին նեստորականութիւնը հերետիկոսութիւն յայտարարուեցաւ (ծանօթագրութիւնը խաղ քհնյ. Ղազարեանինն է):

ւր պարտաւոր է բոլորը ճանչնալ, որոնք Քրիստոսի հետեւած են, ինչպէս Տէրը կ'ըսէ. «Կը ճանչնամ Իմիմներս ու կը ճանչցուիմ Իմիմներէս»¹⁹. այսինքն՝ ճանչնալ ժողովուրդը, որ բարի գործերով է, ու ճանչցուիլ ժողովուրդէն առաքինութեամբ եւ ո՛չ թէ ուտելով ու խմելով, կամ փառասիրութեամբ, կամ պճնուած ու զարդով եւ մօրուքը կոկելով կամ կեղծաւորութեամբ, որոնցմէ Քրիստոս կը փախչի, այլ՝ սրբութեամբ եւ արդարութեամբ: Իսկ ներկայիս, մենք՝ ժողովուրդը, միայն անոնը կը լսենք եւ ո՛չ ոք կը ճանչնանք, որովհետեւ անոնց մէջ այնպիսիներ կան, որ մենք երբեք չենք տեսած կամ լսած, թէ ան ի՞նչ է մեր մէջ, ինչպէս Սուրբ Ոսկերեանը իր գրութիւններէն շատերու մէջ այդպիսիները կ'ամբաստանէ: Իսկ այս սուրբը ժողովուրդին այնպէս ուսուցանեց, որ անոր համար անծանօթ չէր:

Իններորդ՝ որովհետեւ հովիւը հիւանդները առողջներէն կը բաժնէ, ինչպէս նաեւ ոչխարները այծերէն. տակաւին, խոյերը մաքիներուն հետ չի՛ ձգեր, այլ՝ միշտ առանձինն լեռան վրայ կը պահէ: Այդպէս ալ հոգեւոր առաջնորդները պարտաւոր են պոռնիկները ժողովուրդին մէջէն հանել եւ կաշառքով չապականել բոլորին: Այլեւ պէտք է այս ուսուցանէ, որ պարկեշտ մնան իրենց կիներուն հետ, տէրունական տօներն ու պահքերը սրբութեամբ պահեն, որովհետեւ եթէ անասունները պարտաւոր են այսպէս ըլլալ, ինչքան աւելի մարդը պարտաւոր է, որ Աստուծոյ պատկերով է: Տակաւին, կրօնաւորները պէտք է աշխարհականներուն մէջէն առանձնացնել, որպէսզի ցանկութեամբ հիւանդանալով յաւիտենական կորուստով չմեռնին, ինչպէս Սուրբ Ներսէսը ըրաւ²⁰, որ վանքեր շինեց ու կրօնաւորները այնտեղ բնակեցուց. նմանապէս եւ ուրիշները:

Տասներորդ՝ հովիւը բեկուածները կը կապէ եւ հիւանդները կ'առողջացնէ: Այդպէս ալ հոգեւոր հովիւը պարտաւոր է, որ յուսահատածները աստուածային խօսքով հաստատէ հաւատքի մէջ, իսկ մեղքերով հիւանդացածները առողջացնէ՝ մեղքերու թողութեամբ. տակաւին, այնպիսի դեղ տայ, որպէսզի ապրեցնէ հիւանդը եւ դարձեալ չսպանէ, ինչպէս Սուրբ Պասիլիոսը²¹ երիտասարդին ըրաւ. նմանապէս եւ ուրիշները:

¹⁹ Յովհ. Ժ 14:

²⁰ Տէս Հայ Եկեղեցու Պատմութիւն, Տ. Եղնիկ Եպս. Պետրոսեան, էջմիածին, 1998, էջ 46 (ծանօթագրութիւնը խաղ քհնյ. Ղազարեանինն է):

²¹ Տէս Համաքրիստոնէական սուրբեր, Շնորհք Արքեպս. Գալուստեան, Գանձասար, Երեւան, 1997, էջ 101 (ծանօթագրութիւնը խաղ քհնյ. Ղազարեանինն է):

Տասնմեկերորդ՝ հովիւը հին բուրգը կը կտրէ, որպէսզի գեղեցիկը բուսնի: Այդպէս ալ հոգեւոր առաջնորդը պարտաւոր է մեղքի հին եւ թանձրացած սովորութիւնը կտրէ, որպէսզի բարի եւ նոր առաքինութեան բոյս բերէ, քանի որ առանց մեղքերու չար սովորութիւններէն կտրուելէ, հնարաւոր չէ՝ բարիք գործել: Տակաւին, անմեղ ու արդար ժողովուրդը չար սովորութեամբ պէտք չէ՝ կորսնցնէ, ինչպէս ներկայի կուրցած առաջնորդները կ'ընեն, որոնք ո՛չ առաջնորդութեան արժանի են եւ ո՛չ ալ յետնութեան, այլ, որովհետեւ մեր ազգէն ամէն ինչ վերցուեցաւ, նոյնպէս եւ ասիկա: Իսկ այս սուրբ բարի սովորութիւն գործեց եւ նոյն բանին սորվեցուց ուրիշները՝ միշտ առաքինութեան մօտեցնելով:

Տասներկուերորդ՝ հովիւը այնքան կը պատերազմի իր ոչխարներուն համար, մինչեւ մահ իր անձը դնելով իր հօտին վրայ: Այդպէս ալ հոգեւոր հովիւները միշտ պէտք է պատերազմին երկու բաներու դէմ. մէկը՝ հերձուածողներուն դէմ, իսկ միւսը՝ մարմինի ախտերուն եւ ցանկութիւններուն դէմ, եւ այս երկուքը ժողովուրդին համար՝ որպէսզի յանկարծ գայթակղութիւն չպատճառեն, ինչպէս Տէրն ալ կը խրատէ. «Իմֆգիմֆ դնել (տալ) ոչխարմերուն համար»²², ինչպէս Սուրբ Գրիգոր Աստուածաբանը, Կիւրեղը եւ Ոսկեբերանը, որոնք ասոնց [ժողովուրդին] համար մեռան: Այդ պատճառով ալ անոնց յիշատակը կը կատարենք:

Տասներեքերորդ՝ քանի որ հովիւը իր ձեռքին մէջ փող (շեփոր) ունի, որով հօտը կը քաղցրացնէ [նուագելով]՝ բերելու համար դէպի փարախ: Այդպէս ալ հոգեւոր առաջնորդը պէտք է եղանակաւոր ձայներ ու երգեր միշտ երգէ եկեղեցիէն ներս եւ ո՛չ թէ ծուլութեամբ վերցնէ [չնչէ] զանոնք եկեղեցիէն, ինչպէս կ'ընեն ներկայի առաջնորդները, որովհետեւ ծուլութեան պատճառով ամէն ինչ վերցուցին, որ մեր նախնի Հայրերը հաստատած էին եկեղեցիէն ներս եւ ատոնց փոխարէն ուրիշ [նոր] բան մը չսորվեցուցին, բացի ուտել, խմել եւ պղծութիւն, որոնց համար յաւիտենական գեհնը վերապահուած է: Իսկ Ս. Ներսէս²³ գեղեցիկ շարականներով պայծառացուց եկեղեցին, նմանապէս եւ ուրիշները, որոնցմով կ'ուրախանան Սիրոյի որդիները:

²² Տէն Յովհ. Ժ. 11:

²³ Ս. Ներսէս Շնորհալին (1102–1173) մեր Շարակնոցը ամէնէն աւելի ճոխացնողը եղաւ՝ մօտ 30 անուն շարական (ծանօթագրութիւնը Խաղ քհնյ. Ղազարեանինն է):

Տասնչորսերորդ՝ որովհետեւ հովիւը բազմատեսակ կերակուրներ կը պատրաստէ հօտերէն. անոնց կաթը յայտնի է աշխարհական միտքերուն, այլեւ՝ ճամբորդողները լեռներուն վրայ հանդիպելով՝ կը մխիթարուին հովիւներէն՝ հօտերուն [տուած սնունդին] միջոցով: Այդպէս ալ հոգեւոր առաջնորդները պէտք է ժողովուրդէն բաժին առնեն, այն որ արժանի է առնել ըստ Պօղոսի խօսքին. «Եթէ մենք հոգեւոր սերմ ցանցինք՝ ձեռք մէջ, շա՛տ է եթէ նիւթական բարիք հնձենք ձեզմէ»²⁴. Եւ թէ՛ «մշակը իր վարձին աւժանի է»²⁵: Փառասիրութեան համար Եկեղեցւոյ տրուած նուէրը չվերջացնել, որովհետեւ հնարաւորութիւնը ապականեց, որ դժոխքին մէջ է, քանի որ ողորմութիւն է: Արդարեւ, եթէ ոեւէ մէկը աշխարհականներէն ողորմութիւնը կը վերցնէ, այդ [վերցուցածին] հետ գեհենի մէջ կը տանջուի, որովհետեւ բարեգործութիւնները վերցուց: Տակաւին, ձեռքով պէտք չէ յափշտակել անոնցմէ, քանի որ այդ եւս անօգուտ է. իսկ առածը՝ միայն իր անձին համար պէտք չէ լեցնէ, այլ՝ միաբանութեան տունը՝ վանք տանի, որովհետեւ բոլոր ճամբորդները այդտեղ գալով կը յագեանան: Տակաւին մեղք է այն ժողովուրդին, եթէ միայն ինք կ'ուտէ, շուտով կը խեղդուի եւ չի՛ կրնար վերջացնել, իսկ միաբանութեամբ ուտելը առաքինութիւն է, եւ կրնայ վերջացնել, ինչպէս այս սուրբը, քանի որ ժողովուրդէն իրեն եկած բաժինը աղքատութեամբ կ'ուտէր օրը օրին, ինչպէս Պօղոսը եպիսկոպոսութիւնը կը սահմանէ՝ որբերուն եւ այրիներուն տեսուչ ու վերակացու²⁶:

Տասնհինգերորդ՝ հովիւը տաքութիւնն ու սառնութիւնը ոչինչ կը համարէ ոչխարներուն սիրոյն համար: Այդպէս ալ հոգեւոր հովիւները աշխարհի սէրն ու ատելութիւնը պէտք է ոչինչ համարեն, եթէ ժողովուրդը աւելի կը սիրեն. պէտք չէ մեծամտին անոնց վրայ, իսկ եթէ յանդիմանութեան պատճառով ատեն՝ պէտք չէ փախչին, ինչպէս որ բոլորին Տէրը ըրաւ, այլեւ սուրբ հայրապետները ըրին՝ միայն զԱստուած սիրելով եւ Անոր կամքը կատարելով:

Տասնվեցերորդ՝ հովիւը աշխարհական վարքէն հեռու է, կիներու տեսութենէն եւ այլ աղտեղութիւններէն, այլ՝ միշտ լեռներուն վրայ կը շրջի՝ բոլորէն առանձնացած: Այդպէս ալ հոգեւոր հովիւը պէտք է աշխարհական չար գործերէն հեռանայ եւ դիմէ դէպի առաքինութեան լեռ՝ միշտ Անոր

²⁴ Ա. Կորնթ. Թ. 11:

²⁵ Դուկ. Ժ. 7:

²⁶ Տէս Գործք. Ի. 28:

[Տիրոջ] մասին խոկալով: Տակաւին, հոգեւոր հովիւին վայել չէ կիներու հետ նստիլ՝ ուտել եւ խմել: Իսկ եթէ այսպէս կ'ընէ, ինչո՞վ կը զանազանուի աշխարհականներէն, քանի որ իւրաքանչիւր ոք որ կ'ուտէ ու կը խմէ, անպայման միւսն ալ կը փնտռէ, իսկ եթէ մօտիկ ըլլայ ու առանձին, ուրեմն այդպիսիէն աստուածային երկիւղը վերացած է, եւ չարութիւն չի մնար, որ չի գործեր: Տակաւին, եթէ սուրբ հայրերը, որոնք յիստուն օր, եւ երբեմն աւելի մէկ բուռ ոսպով կը սնուէին, բայց եւ այնպէս չարերու ախտէն նեղութիւն կը կրէին, իսկ ան, ով առաւօտէն մինչեւ երեկոյ արբած է եւ չի՛ գիտեր, թէ ուր կը նստի, ինչպէ՞ս կրնայ սատանայէն փրկուիլ, քանի որ ան որ կ'ուզէ զօրաւոր բերդ ունենալ, նախ պէտք է հացէն ու ջուրէն կտրուի, նոր միայն [զօրաւոր բերդ] ունենայ: Այսպէս ալ առաքինութիւնը առանց մարմնաւոր կերակուրներէն ու ըմպելիքներէն կտրուելու, կարելի չէ, որ ըլլայ:

Տասնեօթներորդ՝ որովհետեւ երբեմն հովիւները երկու հոգի կ'ըլլան, մէկը առջեւէն կ'երթայ, իսկ միւսը՝ կը վարէ հօտը: Այդպէս ալ հոգեւոր առաջնորդը պէտք է երկու գործ կատարէ. նախ՝ նախնիներուն վարքը՝ որպէս առաջին գացողներ պէտք է ժողովուրդին սորվեցնէ, որով անոնք ճանապարհին վրայ ուղղութիւն գտնեն եւ ինքն ալ այնպէս գործ ընէ, որ ամբողջ ժողովուրդը իբրեւ մանուկներ Հօր առջեւ ուրախանան՝ Քրիստոսի ցոյց տուածին համաձայն. «Անաւասիկ ես եւ Իմ զաւակներս, որ Աստուած Ինձի տուաւ»²⁷, չըլլայ որ սատանան ըսէ այս խօսքերը, եւ թէ՛ ինք եւ թէ՛ իր հօտը դժոխքի բաժին ըլլան:

Տասնութերորդ՝ [հովիւը] միշտ կը մխիթարուի հօտերու ծնունդով՝ գառնուկները միշտ իր ծոցին մէջ կրելով: Այդպէս ալ հոգեւոր առաջնորդը, երբ տեսնէ, թէ իր ժողովուրդէն մէկը բարեգործ է, պէտք է բերկրալով ցնծայ եւ միշտ Բանին գիրկին մէջ պէտք է հաւաքէ զայն՝ աստուածային վարքի յորդորելով: Այլեւ, վա՛յ ինձի, եղուկ եմ ես, որովհետեւ ներկայի մեռած առաջնորդները այս խօսքերը հակառակին փոխելով՝ իրենք կը մխիթարուին չար անօրէնութիւններուն միջոցով եւ յորդորելու փոխարէն, եթէ տեսնէ, որ անոնցմէ մէկը երկիւղած է, զայն եւս կորուստի կը մատնեն, որովհետեւ առաջնորդներ չէ՛ն, այլ՝ խաբեբաներ: Իսկ մեր սուրբ հայրերը երբ անհաւատներէն մէկ հոգի աստուածգիտութեան կը բերէին կամ բարեգործութեան, իրենց հոգիներուն մէջ կը ցնծային, քանի որ ա՛յդ է առաջնորդին գործը:

²⁷ Ես. Ը. 18:

Տասնիններորդ՝ որովհետեւ երբ երեկոյ ըլլայ, [հովիւը] իր հօտը երբեք չի՝ ձգեր, մինչեւ բոլորն ալ փարախին մէջ չհաւաքէ, եւ ապա միայն ինք կը հանգստանայ: Այդպէս ալ հոգեւոր առաջնորդը պարտաւոր է ձգել, որ հնազանդողները ըստ իրենց կամքին կորսուին, այլ՝ բոլորն ալ պէտք է եկեղեցւոյ փարախին մէջ հաւաքէ մահուան երեկոյին եւ ապա ինք զերծ մնայ անոնց արիւնէն, որով Պօղոսին հետ կարենայ ըսել. «Սուրբ եմ ես [անպարտ եմ] բոլորին արիւնէն, որոնց մէջ շրջեցայ՝ քարոզելու»²⁸:

Քսաներորդ՝ քանի որ իւրաքանչիւր աշխատող մինչեւ երեկոյ կ'աշխատի եւ երեկոյեան կը հանգստանայ: Իսկ հովիւը երեկոյեան ալ աւելի կը տանջուի պատրաստ ըլլալով եւ արթուն մնալով միշտ մինչեւ առաւօտեան, որպէսզի գող մը կամ գայլ մը գիշեր ատեն չօշոտեն գառնուկները: Այդպէս ալ հոգեւոր առաջնորդները գիշերը պէտք է պարապին արթուն մնալու համար, առաւել եւս առանձնապէս աղօթել՝ երկու պատճառներով: Մէկը՝ որ եթէ ինք ննջէ, իր բոլոր ուսումնակիցները իր նոյն ըրածը պիտի ընեն: Երկրորդ՝ քանի որ ժողովուրդը անհոգ ննջած է եւ իր աղօթքներով պահպանուած է:

Արդ, եթէ ննջէ, սատանան բոլորին անպատրաստ կը գտնէ, պատուհաս կը բերէ ու բոլորը կորուստի կը մատնէ, իսկ անոնց արիւնին՝ առաջնորդը պարտական է: Օրինակ, Տէրը ամբողջ գիշերը Աստուծոյ աղօթելով կ'անցընէր, իսկ սուրբ հայրերը արեգակը իրենց ետեւ ձգելով ամբողջ գիշերը երբեք չէին նստեր, մինչեւ արեգակը իրենց դիմացէն չելլեր, եւ աշխարհը այդ ատեն խաղաղութեան մէջ կ'ըլլար: Իսկ մենք ծոյցած ենք ու քունով կը տատանինք, եւ չենք գիտեր ինչ պատասխան տանք Ճշմարիտ Հովիւին՝ Քրիստոսին, որ մեզի յանձնեց Իր բանաւոր հօտը, տակաւին, այնքան ալ չկանք գտնէ, որ մեր անձերը ազատենք Աստուծոյ բարկութենէն, այդ պատճառով դադար չունեցող լացողներու եւ ողբերու արժանի ենք:

Իսկ ժողովուրդին ոչխար որպէս կը նկարագրէ, բազմաթիւ պատճառներով:

Նախ՝ ոչխարը մաքուր կենդանի է²⁹: Այդպէս ալ Քրիստոսի հաւատացողները սուրբ (մաքուր) կը կոչուին սրբութեան գործերուն եւ անբիծ

²⁸ Հմմտ. Գործք. Ի. 25–26:

²⁹ Տէս Ղեւտ. ԺԱ.:

հաւատքին համար: Իսկ եթէ ասոնք չունին, արաբացի գայլ կը կոշուի, քանի որ ոչխարի նման է:

Երկրորդ՝ ոչխարը շատ խոնարհ է: Այդպէս ալ հաւատացեալ ժողովուրդը պէտք է աստուածային օրէնքներուն հնազանդ ըլլայ: Ո՛չ թէ միայն խօսքով պէտք է հնազանդ ըլլայ, ինչպէս ներկայի ժողովուրդը, այլ՝ աստուածային սիրոյն եւ Արքայութիւնը փափաքելուն համար, սուրբ օրէնքներուն մէջ հրամայուածները առանց ձանձրոյթի պէտք է կատարել, որով հնազանդութիւն կ'երեւի:

Երրորդ՝ [ոչխարը] իր տիրոջը կը փարթամացնէ՝ բուրդ, կաթ եւ գառնուկ տալով անոր: Այդպէս ալ հաւատացեալները պարտաւոր են Եկեղեցին փարթամացնել հոգեւոր գործով եւ մարմնաւոր պիտոյքներով, քանի որ «ո՛վ հօտ մը կ'արածէ ու ամօր կաթէն չուտեր», կ'ըսէ առաքեալը³⁰: Եւ թէ՛ «ասոնց առատութիւնը ձեր տկարութեան (պակասութեան) կը հասնի, եւ փոխադարձաբար»³¹:

Չորրորդ՝ ոչխարը իր կտրիչին առջեւ անմոռն է: Այդպէս ալ ժողովուրդը առանց տրտունջի պէտք է խոնարհի ողորմութիւն տալու, որովհետեւ թէեւ ակամայ է, սակայն շնորհքը կատարողինն է եւ ոչ թէ ըսողին, ինչպէս կ'ըսէ առաքեալը. «Աւելի լաւ է տալը, քան՝ առնելը»³², քանի որ եթէ ոչխարը զայն չի խնայեր, որ ի բնէ կը յառաջանայ, ինչքան աւելի պէտք է չխնայել այն, որ օտար է եւ ի բնէ չէ:

Հինգերորդ՝ որովհետեւ օտարներուն ետեւէն չերթար³³, քանի որ կը ճանչնայ Անոր ձայնը, ինչպէս կ'ըսէ Աւետարանը: Այդպէս ալ հաւատացեալները, այլասեռներու ետեւէն պէտք չէ շրջին եւ անոնց հաջոցները լսեն: Տակաւին, անոնք եւս օտար են, որոնք կեղծաւորութեամբ կը թուին, թէ մեզմէ են, սակայն գործերով հեռացած են մեզմէ, այդ պատճառով արժանի չէ անոնց ետեւէն երթալ ու հետեւիլ անոնց, այլեւ չգայթակղիլ, որովհետեւ կրնայ եւ գայթակղութիւնը գայ, եւ վա՛յ գայթակղեցնողին³⁴:

Վեցերորդ՝ հովիւը ի՛նչ ուղղութիւն որ տայ, հօտը այդ ուղղութեամբ կ'երթայ: Այդպէս է նաեւ մեր քաջ Հովիւը՝ Քրիստոս: Արդ, ուր որ Ան գնաց, [մեզ] եւս կեանքի ճանապարհին ուղղեց, եւ արժանի է մեզ այդ ճանա-

³⁰ Ա. Կորնթ. Թ. 7:

³¹ Հմմտ. Բ. Կորնթ. Ը. 14:

³² Գործք. Ի. 35:

³³ Տէս 3-րդ. Ժ. 5:

³⁴ Հմմտ. Դուկ. Ժէ. 1:

պարհով ընթանալ՝ ըստ այնմ. «Ն՛ս եմ ճամբան եւ կեանքը»³⁵, որովհետեւ՝ «Անոր լուծը քաղցր է, բերք՝ թեթեւ, իսկ ճանգիստը՝ շատ»³⁶, այդ պատճառով առանց դանդաղելու Անոր ետեւէն երթանք, քանի որ Ա՛ն է մեր յոյսը: Իսկ եթէ չար հովիւ ըլլայ, չի՛ կրնար խօսքով շարունակել ուսուցանել, այլ՝ ստիպողաբար Քրիստոսի հրամայածները կ'ուսուցանէ: Այդ պատճառով ինչ որ կ'ըսեն, պէտք է կատարել, սակայն ըստ անոնց գործերուն պէտք չէ ընել:

Եօթներորդ՝ թէեւ ոչխարներուն կերպարանքներն ու որակները զանազան են, սակայն՝ ոչխարներ են եւ ուտելի: Այդպէս ալ, թէեւ հաւատացեալներէն ոմանք աշխարհականներ են, ուրիշներ՝ քահանաներ, ուրիշներ՝ կոյսեր, ուրիշներ՝ իշխաններ, սակայն պարտաւոր են մէկ յոյսով եւ քրիստոնէական մէկ սրբութեամբ ապրիլ, այլապէս քրիստոնէութեան անունը սուտ է իրենց վրայ, որովհետեւ գործով չեն ցուցներ:

Ութերորդ՝ ոչխարը խոտելի չէ, այլ՝ ամբողջութեամբ պիտանի է: Այդպէս ալ քրիստոնէաները պարտաւոր են այնպիսի կերպով արժանի ըլլալ Քրիստոսի, որ ամէն ինչ պիտանի ըլլայ եւ ընդունելի ըլլալու արժանի: Իսկ եթէ թուլցած ու անօրէն դարձած են, այնուհետեւ Մարգարէն կ'ըսէ. «Անօրէնը եթէ Ինծի եզ մը զոն մատուցէ, այնպէս է, որպէս թէ մէկը շուն մը մորթէ»³⁷, եւ այլն:

Իններորդ՝ քանի որ զօրութեամբ տկար է եւ չի՛ կրնար գազանի դէմ պատերազմիլ, այդ պատճառով դիւրութեամբ կը բռնուի: Այդպէս ալ աշխարհական ժողովուրդը կատարեալ իմաստութիւն չունի՝ որով կարենայ հերձուածողներուն եւ այլասեռներուն դէմ կանգնի, այդ պատճառով անոնց սուտ խօսքերէն կը պարտուին եւ դիւրութեամբ կը կործանին. ասոր համար արժանի է միշտ եկեղեցի երթալ՝ աստուածային խօսքեր լսելու, եւ ուսուցանուելու, որպէսզի չար հերձուածը անոնց հոգիները չպատառէ:

Տասներորդ՝ քանի որ իրենց ծնունդները ամբողջութեամբ իրենց նման կը բերեն եւ ո՛չ թէ այլ կենդանիներու նման: Այդպէս ալ հաւատացեալները պէտք է իրենց զաւակներուն սրբութեան վարքը սորվեցնեն եւ ամէն ինչի մէջ իրենց նմանին, որովհետեւ որդին իր հօր հարազատ

³⁵ Յովհ. ԺԴ. 6:

³⁶ Հմմտ. Մատթ. ԺԱ. 30:

³⁷ Տէս ես. ԿԶ. 3:

նմանութիւնը ունի, եւ ո՛չ թէ իրենք շար որդիները շարութեան սորվեցնեն, այլ՝ նախ իրենք բարի ըլլան եւ ապա իրենց որդիները տեսնելով իրենք եւս ուսանին [իրենց ծնողներէն բարութիւն]: Իսկ եթէ ծնողները չուսուցանեն, անոնց արիւնին իրենք են պարտական:

Իսկ հերձուածները, շարագործներն ու անհաւատները գայլի կը նմանցնէ, ըստ այնմ. «Գայլը կը յափշտակէ զանոնք ու կը ցրուէ»³⁸: Ասիկա բազմաթիւ պատճառներով:

Նախ՝ որովհետեւ գայլը տան շունի նման է, եւ ան շուն է, սակայն վայրենացած ու գազանացած: Այդպէս ալ շարերը կերպարանքով ու մարդութեամբ հաւատացեալներուն նման են, սակայն շարութեան գործերով ապականուած են, որով սորվելով՝ շարը իբր բարի կը գործեն, որոնցմէ արժանի է փախչիլ:

Երկրորդ՝ քանի որ գայլը գաղտագողի կը շրջի, եւ ընդհանրապէս գիշերով: Այդպէս ալ հերձուածողներն ու շարագործները ծածուկ կերպով կ'ուսուցանեն հերձուածը եւ իրենց գործերը, եւ իրենք ալ ծածուկ կերպով կը գործեն, որովհետեւ եթէ մէկը յայտնապէս տեսնէ զանոնք, անոնց մօտ չերթար, այդ պատճառով ծածուկ կերպով, կամաց-կամաց կը մօտենան ու կորուստի կը մատնեն անմեղները:

Երրորդ՝ քանի որ գայլը նախ ոչխարները կը ցրուէ: Այդպէս ալ անհաւատները նախ քրիստոնեաներուն միաբանութիւնը կը քակեն իրարմէ եւ ապա սուտ խօսքերով դէպի իրենց կը քաշեն, իբրեւ թէ ան այդպէս խօսեցաւ քեզի համար, որպէս թէ անորմէ բան մը կը գողնայ, եւ զայն կ'երթայ ու միւսին կ'ըսէ, եւ ահաւասիկ իրարմէ բաժնուեցան: Առհասարակ, Հայոց իշխանները այսպէս կործանեցան:

Չորրորդ՝ որովհետեւ [գայլը] որ [ոչխարին] հասնի, առանց ընտրութեան կը պատահէ՝ մեծ ըլլայ թէ փոքր: Այդպէս ալ շարերը, որու որ կրնան յաղթել, կը մոլորեցնեն ու կը խաբեն, գիտուն ըլլայ թէ տգէտ: Տակաւին, անմեղները առաւել եւս կորուստի կը մատնեն, որոնք յետոյ իմանալով իրենց կորուստը՝ ոչինչով կ'օգտուին:

Հինգերորդ՝ քանի որ որու որ իր ժանիքներով բռնէ, լման (անվнама) չի՛ ձգեր, նոյնիսկ եթէ բազմաթիւ սուրեր քաշուած ըլլան վրան: Այդպէս ալ շարագործները, որու որ խաբեցին, կամ գիտեն, կամ պատրաստ է [թա-

³⁸ Յովհ. Ժ. 12:

կարողը իշնալու], բաց չեն ձգեր՝ մինչեւ կորուստի չմատնեն զանոնք: Տակաւին, եթէ հերձուած մը մարդու մը մէջ կը բնակի հերձուածողի մը կողմէ, զայն ողջ չի՛ ձգեր՝ մինչեւ այդ հերձուածով կորուստի չմատնէ զայն:

Վեցերորդ՝ որովհետեւ գայլը հովիւէն ու շունէն շատ կը վախնայ, սակայն ինչքան կրնայ, անոնց դէմ եւս կը պատերազմի: Այդպէս ալ շարերը հոգեւոր խրատողէն ու մարմնաւոր իշխանէն շատ կը վախնան, սակայն ինչքան կրնան՝ կ'ուզեն ընտրեալները կորուստի մատնել, թէեւ տուեալ անձը զօրաւոր մէկը ըլլայ, ինչպէս Տէրը հրամայեց:

Եօթներորդ՝ քանի որ գայլը ոյժով շատ զօրաւոր է: Այդպէս ալ հերձուածողը զօրաւոր խօսք կը խօսի. իսկ շարը զօրաւոր խօսքերով կը մոլորեցնէ անմեղները, այդ պատճառով պէտք է շատ աւելի [գիտնալ, իմանալ, ըլլալ] քան զանոնք, որպէսզի անոնց զօրութիւնը ընկրկի իրենց առջեւ եւ հազիւ գերծանին անոնցմէ:

Ութերորդ՝ որովհետեւ գայլը իր կերպարանքը բոլոր ձեւերով կը փոխէ: Այդպէս ալ շարերը իւրաքանչիւր մարդու հետ առանձին խօսքեր կը խօսին ու զանազան ձեւերով կեղծաւորութիւն կ'ընեն, սակայն ներքնապէս լեցուն են ժահահոտութեամբ, գարշութեամբ եւ պղծութեամբ:

Իններորդ՝ գայլի տեսակ մը կայ Արաբիոյ մէջ, որու բուրդը ոչխարի բուրդին չափ է եւ ոչխարի բուրդին նման է, սակայն ոչխարը չի՛ իմանար, թէ գայլ է, որպէսզի փախչի: Իսկ ան կամաց-կամաց կը մօտենայ՝ կը խառնուի անոնց հետ եւ անմիջապէս կը պատառէ: Այդպէս ալ շարագործները՝ քահանայի եւ ուրիշներու զգեստներ հագուելով, սուտ խաբեբայութեամբ հաւատացեալներուն կը մօտենան եւ անմիջապէս իրենց շարութիւնը կը յայտնեն ու չեն կրնար [գոնէ] որոշ ժամանակ ծածուկ պահել, ատոր համար Տէրը կ'ըսէ. «Զգուշացէ՛ք սուտ մարգարէներէն, որոնք ձեզի կու գան ոչխարներու հագուստներով, սակայն ներքնապէս յափշտակող գայլեր են: Անոնց պտուղէն կը նանչնա՛ք զանոնք»³⁹:

Տասներորդ՝ գայլը ագահամիտ, նենգաւոր եւ խորամանկ է: Այդպէս ալ շարերը երեք յատկութիւններ ունին. ագահ են՝ մարմնաւոր ինչքեր յափշտակելով բոլորէն, քանի որ իրենց շարութեան համար նիւթ պէտք է: Տակաւին, անոնք, որոնք անոնց դէմ կը պատերազմին, նենգութիւն ու նախանձ կը դնեն անոնց հետ մինչեւ մահ: Իսկ անոնց, որոնց չեն կրնար, խորամանկութեամբ կը սպասեն յարմար ժամուն ու կորուստին: Որոնց-

³⁹ Հմմտ. Մատթ. է 15:

մէ Քրիստոս ազատէ բոլոր Իր անունին հաւատացողները եւ փրկէ մեզ բանսարկուին եւ անոր կամարարներուն որոգայթաշատ աւազակախումբերէն: Իսկ սուրբ հովիւներու աղօթքներով Քրիստոս թող փրկէ մեզ մարդադէմ բոլոր գազաններէն ու անօրէններէն, որոնք քրիստոնեաներուն դէմ կ'ելլեն: Այլեւ, Տէրը Իր խնամքով թող ակնարկութիւն մը ընէ Հայոց գերուած ազգին, որ առաջնորդ ու հովիւ չունի, այլ՝ իբրեւ մոլորուած ոչ-խարներ կորսուելով կը ցրուի:

Արդ, Տէր Յիսուս, նայէ՛ անպիտան Թումէ (Թովմաս) ծառայիդ եւ մի՛ ձգեր Քեզի յուսացածները: Եւ Քեզի փառք, Հօր եւ Սուրբ Հոգիին հետ միասին, յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

ԳՐԱԲԱՐԷ ԱՐԵՒՄՏԱՀԱՅԵՐԷՆԻ ՎԵՐԱԾԵՑ
ՎԱՐԱՆԴ (ՅԱԿՈԲ) ՔՈՐԹՄՈՍԵԱՆԸ

